

# Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Հաղորդութեան Խորհուրդը

## 1. Ողջունում ենք միմեանց

Մի ոք յերախայից...

♫ *Մարմին տերունական*

*Հրեշտակաց օրհներգութիւն*

Համբարձէք, իշխանք, գրբունս ձեր ի վեր... (Սղմ. 24)

Ո՛վ է սա, թագաւոր փառաց...

Սա ինքն է թագաւոր փառաց:

Խաղաղութիւն ամենեցուն (1-ին անգամ)

(տես՝ աղիւսակ)

Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան (Հռմ. 16:16, 1 Կոր. 16:20, 2 Կոր. 13:12, 1 Թեա. 5:26)

♫ Քրիստոս ի մեջ մեր յայտնեցաւ:  
Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի:

Ահի կացցուք, երկիւղի կացցուք...  
Պատարագ Քրիստոս մատչի անարատ գառն Աստուծոյ: (Հովհ. 1:29)  
Շնորհք, սէր...

Յիսուս – փրկիչ (եբր.)  
Քրիստոս – օճեալ (յուն.)  
Աստուած – *հաստատող* (հայ.)

## 2. Յիշում ենք հաւաքուելու առիթը

*Երգ Սրովբէական*

♫ *Սուրբ, սուրբ, սուրբ,*

*Տէր զօրութեանց.*

*Լի են երկինք եւ երկիր փառօք քո:*

*Օրհնութիւն ի բարձունս:*

*Օրհնեալդ որ եկիր եւ գալոցդ ես*

*անուամբ Տեառն: Ովսաննա ի բարձունս:*

(Ես. 6:3, Յայտ. 4:8)

Առէք, կերէք. այս է Մարմին...

Արբէք ի սմանէ ամենեքեան, այս է Արիւն իմ նորոյ ուխտի...

Ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

(Մաթ. 26:26-30)

## 3. Շնորհակալութիւն ենք յայտնում

♫ *Հայր երկնաւոր*

Եւ զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք

♫ *Յամենայնի օրհնեալ ես, Տէր. Օրհնեմք զքեզ, զովեմք զքեզ. Գոհանամք զքէն, աղաչեմք զքեզ, Տէր, Աստուած մեր: (Մաղմոսներ)*

Խաղաղութիւն ամենեցուն (2) (տես՝ աղիւսակ)

♫ *Որդի Աստուծոյ...*

♫ *Հոգի Աստուծոյ...*

Մկրտուելուց խնդրում ենք՝ հաւատ, յոյս, սէր, մկրտութիւն  
1 Կոր. 13:13

## 4. Աղօթում ենք մեր հոգեւոր ընտանիքի համար

*Յիշեա, Տէր, եւ ողորմեա,*

Մարիամ, Յովհաննէս Մկրտիչ,

Ստեփանոս, Առաքեալ Թադէոս,

Բարթողիմէոս, Գիրգոր Լուսաւորիչ

Գոհութիւն եւ փառաբանութիւն

Հայր մեր (Մաթ. 6:9-13)

Յանուն Հօր, եւ Որդւոյ, եւ Հոգւոյն սրբոյ:

♫ *Հայր մեր, որ յերկինս ես,*

*սուրբ եղիցի անուն քո.*

*եկեսցէ արքայութիւն քո.*

*եղիցին կամք քո,*

*որպէս յերկինս եւ յերկրի:*

*Չհաց մեր հանապազորդ*

*տո՛ւր մեզ այսօր.*

*եւ թող մեզ զպարտիս մեր,*

*որպէս եւ մեք թողումք մերոց*

*պարտապանաց.*

*եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն. այլ*

*փրկեա՛ ի չարէ:*

Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ

փառք յաւիտեանս: Ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն (3)

Խաղաղութիւն ամենեցուն:

- Եւ ընդ հոգւոյդ քում:

Աստուծոյ երկրպագեցուք:

- Առաջի քո, Տէր:

## 5. Փառաբանում ենք

*Ի սրբություն սրբոց:  
Միայն սուրբ, միայն Տէր,  
Օրհնեալ Հայր Սուրբ,  
Աստուած ճշմարիտ:  
Օրհնեալ Որդիդ Սուրբ,  
Աստուած ճշմարիտ:  
Օրհնեալ Հոգիդ Սուրբ,  
Աստուած ճշմարիտ:*

## 6. Մաքրում ենք

Մեղայ ամենասուրբ Երրորդութեանն,  
Հօր, եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ . . .  
**Մեղայ Աստուծոյ:**

*Ռ Տէր ողորմեա.  
Ամենասուրբ Երրորդութիւն,  
տուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ հիւանդաց բժշկութիւն.  
ազգիս հայոց սէր միութիւն.  
Յիսուս փրկիչ մեզ ողորմեա:*

այլելուիա – գովենք Տիրոջը (եբր.)  
ովսաննա – փրկիր մեզ, աղաչում եմ (եբր.)  
ամէն – թող լինի, եղիցի (եբր.)  
սրովբէք, քերովբէք – հրեշտակ (եբր.)  
սաղմոս – Դաւիթ թագաւորի գովերգ (յուն.)  
եկեղեցի – հաւաքատեղ (յուն.)

## 7. Ճաշում ենք

Սա է կեանք, յոյս, յարութիւն, քաւութիւն  
եւ թողութիւն մեղաց...  
Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ  
սրբութեամբ հաղորդեցարուք...

*Ռ Օրհնեալ է Աստուած,  
Քրիստոս պատարագեալ  
բաշխի ի միջի մերում. ալէլուիա:  
Զմարմին իւր տայ մեզ կերակուր եւ սուրբ  
գարին իւր ցօղէ ի մեզ.  
Մատի՛ք առ Տէր եւ առէք զոյս.  
Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր.  
ալէլուիա:  
Օրհնեալ, եկեալ անուամբ Տեառն: (Մաթ.  
21:9, Մաթ. 23:39, Մարկ. 11:9, Դուկ. 13:35,  
Յովհ. 12:13)*

**Հաւատամք** (աւտում է մինչեւ խորհուրդը)

- Հաւատամք ի մի Աստուած, ի հայրն ամենակալ. յարարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից:
- Հաւատամք եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ
- Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին
- Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եւ առաքելական սուրբ եկեղեցի

## 8. Շնորհակալութիւն եւ հրաժեշտ

(Սղմ. 28:9) Կեցո, Տէր, զժողովուրդս քո եւ  
օրհնեա զժառանգութիւնս քո:

### Գոհաբանութիւն

*Ռ Լցաք...  
Ռ Գոհանամք...*

### Արձակման օրհնութիւն

*(Սղմ. 113:2) Եղիցի անուն Տեառն  
օրհնեալ յայսմեհետէ մինչեւ յաւիտեան:  
(Սղմ. 34:1) Օրհնեցից զՏէր յամենայն  
ժամ, յամենայն ժամ օրհնութիւն Նորա ի  
բերան իմ:  
Երթայք խաղաղութեամբ եւ Տէր եղիցի  
ընդ ձեզ ընդ ամենեսեանդ Ամէն.*

### Ողջոյններ

Քահանային՝  
Օրհնեա տէր  
Վարդապետին եւ եպիսկոպոսին՝  
Աստուած օգնական

Սուրբ Ծնունդ՝  
Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ:  
– Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի:

Զատիկ՝  
Քրիստոս յարեաւ ի մեռելոց:  
– Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի: